

Կազմված է 03.11.2014 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 6 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
17. 11.2014 թ. թիվ 2666 -Ա
հրամանով

Առողջապահության նախարար՝


Ա. ԳԻՐԱԴՅԱՆ



Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 19.11.2008 թ.,
գրանցման թիվ 271.210.03569
վկայական 03 Ա 083468
հարկ վճարողի հաշվառման համար՝
01243384

25.04.2014 թ. գրանցված

կանոնադրության թիվ 001.3

փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից «28» 11 2014 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝


Ա. ԳԻՐԱԴՅԱՆ



«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

պետական ոչ առևտրային կազմակերպության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1-ին կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Կենտրոնը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. մարտի 27-ի «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 337-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՂԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 09.04.1996 թ., պետական գրանցման համարը՝ 1.140.00849, հարկ վճարողի հաշվառման համար՝ 03503102) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՂԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 26.01.1998 թ. թիվ 37 հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՂԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» պետական ձեռնարկության վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը»:

2. Կանոնադրության 10-րդ կետը կարդալ հետևալ խմբագրությամբ.

«10. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 2201, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Արզնու խճուղի, թիվ 10»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպության 25.04.2014 թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը: